



**ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ
ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ
(1 մարտի 1987 թ.)**

«Յանուն Հօր և Որդույ և Հոգույն Սրբոյ, ամէն»:

«Եւ եղն խաղաղութիւն մեծ» (Ղոկ. Ը 24):

Սիրելի հավատացյալներ, մեր Փրկչի՝ Քրիստոսի խոսքերն են սրանք, արտասանված մի դեպքի առիթով։ Սուրբ Ավետարանը պատմում է հետևյալը այդ դեպքի մասին։ Հիսուս, ինչպես սովորաբար, շրջապատված իր աշակերտներով շրջում էր քաղաքից քաղաք, տանելու համար բոլորին Սատուն խոսքը։ Պատահում է, որ կգտնվեն ծովի ափին և անցնեն մյուս ափը շարունակելու իրենց առաքելությունը։ Հիսուս հոգնած էր և նավի վրա քունը տանում է։ Երբ նավը հառաջանում է իր ճանապարհին, անսպասելի կերպով քամի է բարձրանում։ Ալիքները հետզիւտն հուզվում են, բարձրանում, և ահա սկսվում է մի սաստիկ ալեկոծում։ Հիսուսի աշակերտները սարսափում են, փորձում են մի կերպ պահել նավակի հավասարակրշուությունը, բայց դժվարանում են, վախենում են հանկարծ չինչի շուր զա նավը։ Սակայն, տարօրինակ երևոյթ, ալեկոծումը Հիսուսի քունը բնավ չի խանգարում։ Նա շարունակում է անվիրով քնանալ։ Ի վերջո աշակերտները արթնացնում են նրան, ասելով՝ Վարդապետ, կործանվում ենք։ Հիսուս արթնանում է, նայում է շուրջը և իր առաջին խոսքը լինում է հանդիմանություն իր աշակերտներին, թե ի՞նչ եք այդքան վախենում, ինչո՞ւ այդքան պակաս է ձեր մեջ հավատքը։ Եվ հետո դառնում, իր սաստը ուղղում է ալիքներին։ Քիչ հետո ալիքները աստիճանաբար հանդարտվում են, փոթորիկը անցնում է և լինում է «խաղաղություն մեծ»։ Զարմանում են աշակերտները, թե այս մարդը ինչպիսի՞ն է, որ կարողանում է նույնիսկ բնության ուժերի վրա ազդել և փոթորիկը խաղաղեցնել։

Սիրելի հավատացյալներ, այս պատահարը, այս դեպքը մի ուրուս իմաստ ունի, որը այժմեական է բոլոր ժամանակների համար: Տեսնու ենք, թե ինչպես Հիսուս իր սաստը ուղղում է իր աշակերտներին, ատելով, թե նրանց հավատքը տկար է և որ դրա համար են վախենում: Ապա սաստով խաղաղեցնում է ալեկոծված ջրերին: Այս պատահարը մեզ ուսուցանում է հոգերանական այն ճշմարտությունը, թե մարդիկ իրենց հոգու խաղաղությամբ կարող են խաղաղություն բերել նաև իրենց շրջապատին, իրենց միջավայրին, ինչ պայմաններու մեջ էլ որ գտնվեն, նույնիսկ եթե խկապես փոթորկավի վիճակի մեջ գտնվեն: Մարդիկ եթե պահեն իրենց հոգու խաղաղությունը, հավասարակշռությունը, ինքնավատահությունը, հավատքը, այսպիսով նրանք անպայման կարողանան հայթահարել արտաքին փոթորիկները, արտաքին տագնապները, արտաքին ոժվարությունները: Իրոք, մեզանից ամեն մեկը իր անհատական կյանքում, իր ընտանեկան կյանքում, կարծում եմ, այս փորձառությունը երբեմն ունենում է, եթե, օրինակ, ընտանեկան հարկի տակ անհակացողություններ են լինում ինչ-ինչ պատճառներով: Եթե նրանց մեջ գտնեն մեկը գտնվի, ընտանիքի անդամներից մեկը, որ պահի իր հոգու հավասարակշռությունը, իր հոգու խաղաղությունը, ինչպես Հիսուս սաստեց իր աշակերտներին, փոխանցի նրանց իր հոգու խաղաղությունը, ներդաշնակությունը, այն ատեն այդ ընտանիքի վրա կիշճի խաղաղությունը:

Այս պատմվածքից, կարծում եմ, կարող ենք հետևողներ մի պատվիրան, ուղղված մեզ բոլորին, մանավանդ Մեծ պահոց ու ապաշխարության այս օրերին: Պատվիրան, որ ամեն մարդ թե՛ իր ընտանեկան կյանքում, թե՛ աշխատանքի վայրում, թե՛ հասարակական կյանքում պահի իր ներքին հավասարակշռությունը, իր ինքնավատահությունը, հաշտարար ու համերաշխող ոգին, նաև ներդաշխող ոգի ունենա, որպեսզի հոգեկան վիճակը դառնա վարակիչ մրուսներին ու ստեղծվի խաղաղ մթնոլորտ: Եվ երբ այսօր խոսում ենք խաղաղության մասին, չենք կարող չանդրադանալ նաև այն կացության, որի մեջ գտնվում է մեր օրերի համայն մարդկությունը, ամրող մեր աշխարհը, որ տագնապալի կացության մեջ է գտնվում ապագա հավանական պատերազմի վտանգի առաջ: Մեր ժողովուրդը իր պատմության ընթացքում բազում արհավիրքներ, պատերազմներ, կոստրածներ է տեսել և միշտ երազանքն է ունեցել խաղաղ և անվտանգ ապրելու և արդար վաստակով իր կյանքը շենացնելու, իր հայրենիքը ծաղկեցնելու: Բայց ավաղ, հաճախ, իր կամքից անկախ, ավելի մեծամեծներ և հզորներ պատերազմներ են մղել և ուսմակիու արել մեր փոքրիկ ժողովուրդը և մեր Սուրբ Եկեղեցին: Ահավասիկ, թե ինչո՞ւ այսօր, երբ աշխարհը այսպիսի վլուանգների առջև է գտնվում, մանավանդ ատումական ուժերի սարսափի ներքո, մենք բոլորս պետք է աղոթենք, որպեսզի մահվան բոլոր ուժերը խափանվեն և ստեղծվի ամրող աշխարհի մեջ խաղաղ և ապահով գոյավիճակ, բոլոր ազգությունների համերաշխ գործակցությամբ:

Այս սրբազն նպատակով աշխարհում ամեն տեղ լինում են ժողովը դական հավաքույթներ՝ աղոթքով, կենտանի խոսքով և պալքարով: Ահա թե ինչո՞ւ նաև մեր երկրում՝ Սուրբառական Միությունում, մի շաբաթ առաջ Մոսկվայում տեղի ունեցավ համաշխարհային մի համագումար, մի մեծ ժողով, ֆորում կոչված, որտեղ շուրջ հազար ներկայացնություններ տարբեր երկրներից, տարբեր ազգություններից, տարբեր Եկեղեցներից հավաքվել էին նոյն մտահոգությամբ, նոյն կամեցողությամբ՝ կամնելու ատոմական

գենքերի օգտագործումը, ստեղծելու խաղաղ և համերաշխ մի աշխարհ։ Մեզ՝ քրիստոնյաներիս համար, մեծապես ողջունելի են նման միջոցառումներ, հավաքույթներ, համաժողովներ, որովհետև մեր քրիստոնեական հավատքին խորապես համապատասխանում է խաղաղության գաղափարը։ Եվ այս փոքրիկ պատմվածքը, Ավետարանից վերցված, ցույց է տալիս նոյնպես այդ խաղաղության տեսչը, մանավանդ, մարդկային հավատի ուժը՝ ներգործելու արտաքին արհավիրքների ու վտանգների վրա, ստեղծելու համար խաղաղ գոյավիճակ։

Սղոթենք առ Աստված, որ նաև մեր օրերին և մոտ ապագային, բոլորին աղոթքներով և մեր բարի մասինքներով, աշխարհի խոնարհ բազմությունների արդար երազանքները իրականանան, պասկվեն հաջողությամբ, և համայն աշխարհում ընդմիշտ լինի «խաղաղություն մեծ», այժմ և հավիտյան, ամեն։

